

Հավելված

Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի հունիսի 28-ի
N 89-Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _____

ԷԼԵԿՏՐՈՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

(արտահանող-համակարգի օպերատոր)

" _____ " _____ 200_ թվական _____ ք. _____

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

դեկլարավելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, մի կողմից, եւ

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կատարող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

դեկլարավելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, մյուս կողմից,
այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի
մասին.

1. Պայմանագրում օգտագործված հասկացությունները

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով.

Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է
օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00.00-ին եւ ավարտվում օրացուցային ամսվա
վերջին օրվա ժամը 24.00-ին.

Ֆորս մաժոր՝ արտակարգ եւ անկանխելի դեպքեր եւ հանգամանքներ, որոնք
ստեղծվել են Կողմի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով
դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսեւորումները,
ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաեւ
սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ,
ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք
խոչընդոտում են Կողմի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած
ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա
կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ
ուժերի ազդեցությունը:

2. Պայմանագրի առարկան

2.1 Կատարողը էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի

Ծառայություններն է մատուցում Պատվիրատուին էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում, իսկ Պատվիրատուն վճարում է մատուցված ծառայությունների համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3. Կողմերի պարտականությունները

3.1 Կողմերը պարտավոր են ղեկավարվել "Էներգետիկայի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 16-ի "Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգը հաստատելու մասին" N 149-Ն որոշմամբ, սույն պայմանագրով, գործունեության լիցենզիաներով:

3.2 Կատարողը պարտավոր է.

ա) իրականացնել իր գործունեության լիցենզիայով նախատեսված գործառնությունները՝ էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրով նախատեսված արտահանման ծավալները ապահովելու համար.

բ) իրականացնել էլեկտրաէներգետիկական համակարգի տնտեսական կարգավորումը արտահանման եւ ներքին սպառման գումարային բեռնվածքի համար:

3.3 Պատվիրատուն պարտավոր է.

ա) սույն պայմանագրի համաձայն վճարել Կատարողին՝ վերջինիս մատուցած ծառայությունների դիմաց.

բ) համաձայնեցնել էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) պայմանագրով նախատեսված արտահանման ծավալները Կատարողի հետ.

գ) մինչև Հաշվարկային ամսվան նախորդող ամսի 15-ը, Կատարողի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի (հզորության) բեռնվածքի օրական գրաֆիկը.

դ) Հաշվարկային ամսվա ընթացքում արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) բեռնվածքի օրական գրաֆիկում փոփոխությունն նախատեսվելու դեպքում, փոփոխությունների կատարման օրվանից 2 (երկու) օր առաջ, Կատարողի համաձայնեցմանը ներկայացնել նախատեսվող փոփոխությունները:

4. Վճարման կարգը

4.1 Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

4.2 Մինչեւ Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Կատարողն իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագիր եւ ներկայացնում Պատվիրատուին:

4.3 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարում է Պատվիրատուն՝ մինչեւ Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

4.4 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգերով:

5.2 Սույն պայմանագրի 4.3 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից, Պատվիրատուն վճարում է սույն՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է սույնը, ապա չվճարված գումարը:

6. Ֆորս մաժորային իրավիճակներ

6.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք ֆորս մաժորի հետեւանք են:

6.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետեւանքների վերացման հնարավոր

Ժամկետները:

7. Տարածայնությունների լուծումը

7.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջեւ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Մույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

7.2 Եթե տարածայնության առարկան Կատարողի կողմից իր մատուցած ծառայությունների համար ներկայացված հաշիվ-ապրանքագիրն է, ապա ցանկացած դեպքում Պատվիրատուն պարտավոր է ստորագրել այն եւ կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարածայնությունը: Կողմերն իրավունք ունեն ստորագրած հաշիվ-ապրանքագրին կցել հատուկ կարծիք:

8. Լրացուցիչ պայմաններ

8.1 Կրիտիկական (վթարային) իրավիճակների սկիզբն ու ավարտը հայտարարում է Կատարողը՝ Հանձնաժողովի սահմանած կարգի համաձայն այդ մասին անհապաղ տեղեկացնելով շահագրգիռ կողմերին:

9. Այլ պայմաններ
(կազմում են Կողմերը)

10. Պայմանագրի գործողության ժամկետը եւ փոփոխման կարգը

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից եւ գործում է մինչեւ 200__ թվականի _____ -ը:

10.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

10.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրոնային կապի համակարգի օպերատորի ծառայության մատուցման (արտահանող-համակարգի օպերատոր) պայմանագրի նոր օրինակելի ձեւ հաստատելու կամ գործող օրինակելի ձեւում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

10.4 Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական Կատարողի, Պատվիրատուի եւ Հանձնաժողովի համար:

11. Կողմերի գտնվելու վայրը եւ հաշվարկային համարները

Պատվիրատու՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____

Կատարող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____

Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն,
ազգանուն)

(ստորագրություն, անուն,
ազգանուն)

Կ.Տ.

Կ.Տ.

| Գրանցված է "___" _____ 200 ____ թվական |

| Գրանցման N _____ Կ.Տ. |

| Պատասխանատու _____
| (ստորագրություն, անուն, ազգանուն) |
